ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 7

20.05.2016Թ. ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝*ավագանին որոշեց.*

Հաստատել 20.05.2016թ. թիվ 3 նիստի օրակարգը՝

1. ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ,

2. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ,ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ,ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ, ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ Կ Ա Ր Գ Ե Ր Ը,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր Ը ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ Ձ Ե Վ Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

3. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,

4. ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

5.<<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

6. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱԲԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 8

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին *որոշում է.*

Համայնքի 2016թ բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Շահումյան համայնքի ավագանու 2016թվականի
մայիսի 20-ի N 8որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2014թ. ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	2014թ. ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
Վարչական բյուջե	93925.4	23816.1	25.3
Հողի հարկ	16350.0	3080.4	18.8
Գույքահարկ	8400.0	3251.0	38.7
Տեղական տուրք՝ընդամենը	650.0	1016.8	155.2
Համայնքային հողերի օգտագործման վարձավճար	2447.0	8.3	0.03
Տեղական վճարներ	240.0	-	-
Այլ մուտքեր	-	-	-
Պետական բյուջեից համահարթեցման դոտացիա	65838.4	16459.6	25.0
Ֆ/բ-ի տարեսկզբի մնացորդը	16903.2	16903.2	100
Օտարվող հողի վճար	5000.0	213.9	4.2
Եկամուտներ: Ընդամենը	*115828.6*	24030.0	*20.7*

ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2014թ. ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	2014թ. ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
Վարչական բյուջե	93925.4	21360.3	
Օրենսդիր և գործադիր մարմին 01.1.1 Պետական կառավարում	33200.0	7613.3	
Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ 01.3.1	33200.0	7613.3	
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01.3.3	1100.0	264.0	
Արտադպրոցական դաստիարակություն	10770.0	3000.0	
Աղբահանում 5.1.1	3200.0	850.0	
Առողջապահություն	600.0	600.0	
Գրադարան 8.2.1	1400.0	318.0	
Այլ մշակութային կազմակերպություն 8.2.4	2000.0	450.0	
Նախադպրոցական կրթություն 9.1.1	20500.0	4500.0	
Միջնակարգ ընդհ.կրթություն 9.2.2	600.0	600.0	
Սոցիալական հատուկ արտոնություն 10.7.1	10000.0	2825.0	
Փողոց.վերակառուցում ,հիմնանորոգում4.5.1	6000.0	-	
Այլ ծախսեր	1250.0	340.0	
Ֆոնդային բյուջե	21903.2	8530.0	
Ընդամենը	*115828.6*	*29890.0*	

Աշխատակազմի քարտուղար՝ **Շ.Գրիգորյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 9-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ,ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ, ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ Կ Ա Ր Գ Ե Ր Ը, ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր Ը ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ Ձ Ե Վ Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 35-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի 1910-Ն որոշմամբ հաստատված կարգով՝
ավագանին որոշում է.

Հաստատել Շահումյան համայնքի գերեզմանատանը՝

1)գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման կարգը/հավելված 1, ձև 1/,
2)վճարովի հիմունքներով հողատարածքի հատկացման կարգը/հավելված 2/,
3)վերահուղարկավորման կարգը /հավելված 3/,
4)գերեզմանատների շահագործման և գերեզմանատներից օգտվելու կանոնները/հավելված4,5/,
5)գերեզմանի վկայականի ձևը/ ձև 2/:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված 1
Արարատի մարզի
Շահումյան համայնքի
ավագանու 20.05.2016թ.
թիվ 9-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են մահացած անձանց հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի անվամբ համայնքի գերեզմանատանը գերեզմանատեղերի (գերեզմանների) հաշվառման և հուղարկավորությունների կարգը:

2. Գերեզմանատանը գերեզմանատեղերի հաշվառումը և հուղարկավորությունների գրանցումն իրականացվում է գերեզմանատանը թաղումների և գերեզմանատեղերի հաշվառման ու հուղարկավորությունների գրանցման՝ յուրաքանչյուրը իր մասով, դրա համար նախատեսված մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

3. Գերեզմանատանը գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանի տիպային ձևը հաստատված է պետական լիազորված մարմնի կողմից:

4. Մատյանում ուղղումներ և ջնջումներ կատարելն արգելվում է: Անհրաժեշտության դեպքում՝ կատարված ուղղումները կամ ջնջումները վավերացվում են գրանցման մատյանը վարող պատասխանատու անձի ստորագրությամբ:

5.Յուրաքանչյուր գերեզմանի համար տրվում է կառավարության հաստատած ձևին համապատասխան վկայական:

6. Մատյանը պահվում է անժամկետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ **Շ.Գրիգորյան**

Ձև 1

Մ Ա Տ Յ Ա Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Գրանցման հերթական համարը, տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Մահացածի անունը, հայրանունը, ազգանունը	Մահացածի ծննդյան և մահվան տարեթիվը, ամսաթիվը, ամիսները	Մահվան վկայականի համարը, գրանցող մարմնի անվանումը, գրանցման տարեթիվը, ամսաթիվը, ամիսը	Մահացածի վերջին բնակության վայրը	Գերեզմանի վկայականի համարը, ծառուղի, հատված, շարք	Գերեզմանի մակերեսը (քառ. մ)		Հուղարկավորության կազմակերպումն ստանձնող անձի, ազգակցական կապը		Տվյալ գերեզմանում թաղվածների թիվը	Նշումներ	Գրանցում կատարող պատասխանատու անձի ստորագրությունը
						ընդամենը	այդ թվում՝ կնաբոդի	անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի տվյալները, ազգակցական կապը	ստորագրությունը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

Հավելված 2
Արարատի մարզ
Նահիջևանի համայնքի
ավագանու 20.05.2016թ
թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են համայնքային գերեզմանատներում ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար, բացի օրենքով նախատեսված՝ անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով լրացուցիչ տարածք տրամադրելու հետ կապված գործընթացները:

2. Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի տարածք հատկացվում է չորսից ավելի անդամ ունեցող ընտանիքներին՝ միայն որպես գերեզմանատեղ օգտագործելու իրավունքով: Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 6.0 քառ. մետր:

3. Վճարովի հողատարածքը հատկացվում է բաց գերեզմանատներում հերթական թաղում իրականացնելու ժամանակ գոյություն ունեցող գերեզմանին կից ազատ տարածքի առկայության դեպքում և նոր ընտանեկան գերեզման հատկացնելու դեպքում՝ ըստ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծի (սխեմայի) և թաղումների հերթականության:

4. Արգելվում է վճարովի հողատարածքների հատկացումը մասնակի փակ գերեզմանատներում:

5. Գոյություն ունեցող գերեզմանին կից վճարովի հողատարածքի հատկացումը չպետք է խախտի գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը (սխեման) և խոչընդոտի հարևան գերեզմանների ու անցումների օգտագործումը:

6. Բաց կամ նոր կազմավորվող գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում), ելնելով տեղական պայմաններից, կարող են նախատեսվել առանձին հատվածներ (ծառուղիներ)՝ ընտանեկան գերեզմանների կազմավորման համար, ներառյալ վճարովի հողատարածքները:

7. Գերեզմանատան տնօրինությունը վճարովի տարածքը հատկացնում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի և մահացածի ընտանիքի անդամների կազմի մասին համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

8. Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը որոշում է համայնքի ղեկավարը՝ օրենքով սահմանված կարգով, ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների:

9. Հատկացված հողատարածքի արժեքը վճարվում է համայնքի բյուջե, կատարված վճարման դիմաց տրվում է անդորրագիր: Ստացված միջոցներն օգտագործվում են գերեզմանատների պահպանման ու շահագործման համար:

10. Գերեզմանատան տնօրինությունը վճարման անդորրագրի հիման վրա համապատասխան նշում է կատարում գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում) և գրանցում գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման ու թաղումների գրանցման մատյանում և գերեզմանի վկայականում:

11. Գերեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ տեղում նախանշում է վճարովի հողատարածքի տեղը, չափերը և սահմանայուններով նշում գերեզմանի սահմանները:

Աշխատակազմի քարտուղար՝ **Շ.Գրիգորյան**

Հավելված 3
Արարատի մարզ
Շահումյան համայնքի
ավագանու 20.05.2016թ
թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ

ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են վերահուղարկավորման հետ կապված գործընթացները:
2. Մահացածի հարազատների ցանկությամբ՝ մահացածի վերահուղարկավորումը (գերեզմանից այլ գերեզման տեղափոխելը) իրականացվում է թաղումից առնվազն երեք տարի հետո՝ մահացածի հարազատների միջոցների հաշվին:
3. Վերահուղարկավորումը թույլատրում է գերեզմանատան տնօրինությունը՝ մահացածի հարազատի դիմումի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի կողմից տրված վերահուղարկավորում իրականացնելու հնարավորության վերաբերյալ եզրակացության հիման վրա:
Մահացածի հարազատն այլ բնակավայրի գերեզմանատուն տեղափոխելու դեպքում ներկայացնում է նաև տվյալ բնակավայրի գերեզմանատան տնօրինության թույլտվությունը:
4. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանվում է ցերեկային ժամերին, գերեզմանատան տնօրինության ու պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմնի ներկայացուցիչների պարտադիր ներկայությամբ, անհրաժեշտության դեպքում ոստիկանության ներկայացուցչի մասնակցությամբ:
5. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանելուց հետո գերեզմանատան տնօրինության կողմից գերեզմանահորն անմիջապես ախտահանվում է, լցվում հողով, և տեղը հարթեցվում է:
6. Հանված աճյունը (աճյունի մնացորդները) փաթաթվում է բամբակյա կտորով և տեղադրվում պոլիէթիլենային պարկի մեջ, որից հետո տեղադրվում է փայտյա արկղի կամ դագաղի մեջ և տեղափոխվում նոր գերեզման: Նոր գերեզմանում թաղելուց առաջ աճյունը (աճյունի մնացորդները) հանվում է պոլիէթիլենային պարկից:
7. Նախկին և նոր գերեզմանների գերեզմանատների տնօրինությունները վերահուղարկավորման մասին գրանցումներ են կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյաններում ու գերեզմանների վկայականներում:
8. Գերեզմանատների տեղափոխման դեպքում վերահուղարկավորումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և այդ դեպքերի համար նախատեսված միջոցների հաշվին:

Աշխատակազմի քարտուղար՝ **Շ.Գրիգորյան**

Հավելված4
Արարատի մարզ
Շահունյան համայնքի
ավագանու20.05.2016թ
թիվ 9-Ն որոշման

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն ընդհանուր կանոններով սահմանվում են գերեզմանատների բարեկարգման, պահպանման ու շահագործման (այսուհետ՝ շահագործում) ընդհանուր կանոնները:

2. Գերեզմանատները շահագործվում են համապատասխան գերեզմանատան կառավարիչների միջոցների հաշվին:

3. Գերեզմանատների շահագործումն ապահովում է համայնքային գերեզմանատների դեպքում՝ համայնքի ղեկավարը,իսկ մասնավոր գերեզմանատների դեպքում՝ համապատասխան գերեզմանատան կառավարիչը:

4. Պետական լիազոր մարմինը գերեզմանատների և հուղարկավորությունների կազմակերպման բնագավառում իրականացնում է օրենքով իրեն վերապահված լիազորությունները:

5. Գերեզմանատները կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների՝ որոշմամբ՝ ըստ գտնվելու բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան:

6. Մասնավոր գերեզմանատները կազմավորվում են հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի վրա՝ միաժամանակ պահպանելով քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջները:

6.1. Մասնավոր գերեզմանատները կազմակերպվում են իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ սեփականության կամ կառուցապատման իրավունքով իրենց տրամադրված նվազագույնը 3 հեկտար տարածքով հողամասերում՝ մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվության հիման վրա:

7. Գերեզմանատները տեղադրվում են բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերից ու հանգստի գոտիներից առնվազն 300 մետր հեռավորության վրա:

8. Համայնքներում նոր գերեզմանատների կազմակերպման, գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքները տրամադրվում և նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Գերեզմանատները նախագծվում են դրանց համար հատկացված տարածքների ինժեներաերկրաբանական հետազոտությունների նյութերի փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

10. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար համայնքի ղեկավարը հաստատում է գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման), որում նախատեսվում են՝

ա) գերեզմանատան գբաղեցրած հողատարածքի սահմանները,

բ) գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ,

գ) օրենքով սահմանված չափերով գերեզմանների հատկացման համար տեղամասերը (ծառուղիները, հատվածները, շարքերը) և դրանց օգտագործման հերթականությունը՝ առանձնացնելով ընտանեկան գերեզմանների, անհատական գերեզմանատեղերի (մեկ անձի) և պատմամշակութային տեղամասերը,

դ) ճանապարհների ու շավիղների տեղադրությունը, որոնց ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 15 տոկոսը,

ե) կանաչապատման տեղամասերը չպետք է գերազանցեն գերեզմանատան ընդհանուր տարածքի առնվազն 20 տոկոսը,

զ) գերեզմանատան շահագործման և գերեզմանատնից օգտվելու համար անհրաժեշտ շինությունները, ենթակառուցվածքները՝ ելնելով տեղական պայմաններից (ավտոկայանատեղ, սգո արարողությունների սրահ, գրասենյակ, սգո պարագաների ու ծաղիկների վաճառքի կետ, գործիքների վարձույթի կետ, ոռոգման համակարգ, խմելու ջրի ծորակ, հասարակական զուգարան, պարիսպ (ցանկապատ):

10.1. Համայնքի ղեկավարը պետական կամ մասնավոր գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերը հաստատելիս սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված «գ», «դ» և «զ» ենթակետերով սահմանված պահանջների նախատեսման մասով համաձայնեցնում է համապատասխան գերեզմանատները տնօրինող կառավարիչների հետ:

11. Ընտանեկան գերեզմանների սահմանների միջև տարածությունը պետք է լինի առնվազն 0,5 մետր: Ընտանեկան գերեզմաններում գերեզմանատեղերի և անհատական գերեզմանատեղերի միջև տարածությունը պետք է լինի մեկ մետր երկարությամբ ու առնվազն 0.5 մետր լայնությամբ:

12. Գերեզմանահորի խորությունը պետք է լինի առնվազն 1,5 մետր: Երեզմանահորի հատակն ստորգետնյա ջրերի մակարդակից պետք է առնվազն 2,5 մետր բարձր լինի:

13. Մահացածի աճյունը գերեզմանահորում տեղադրելուց հետո գերեզմանը ծածկվում է 0.5 մետր բարձրությամբ հողաթմբով, որի եզրերը պետք է լինեն գերեզմանահորի չափերից ավելին՝ գերեզմանահորը մակերևութային ջրերի թափանցումից պաշտպանելու նպատակով:

14. Գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները:

15. Գերեզմանատան տնօրինությունն ապահովում է գերեզմանատան տարածքի մաքրությունը և կազմակերպում աղբահանությունը:

16. Գերեզմանատան տարածքը պետք է ապահովված լինի մակերևութային ջրերի հեռացման համակարգով:

17. Գերեզմանատան հողատարածքներում, այդ թվում՝ սանիտարապաշտպանիչ գոտում արգելվում են դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն, ինչպես նաև պտղատու ծառերի ու թփերի տնկումը:

18. Գերեզմանատանը հարակից տարածքներում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքները պետք է լինեն գերեզմաններից առնվազն 40 մետր հեռավորության վրա:

19. Գերեզմանատան տարածքում արգելվում է բնակավայրերի խմելու և տնտեսական ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերի տեղադրումը՝ բացառությամբ գերեզմանատան կարիքների համար տեղադրվողների:

20. Գերեզմանատների տեղափոխման դեպքում չի թույլատրվում դրանց զբաղեցրած հողատարածքներն օգտագործել գյուղատնտեսական նպատակների համար:

Աշխատակազմի քարտուղար՝ **Շ.Գրիգորյան**

Հավելված 5
Արարատի մարզ
Շահումյան համայնքի
ավագանու20.05.2016թ
թիվ 9-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1. Սույն կանոններով սահմանվում են գերեզմանատներից օգտվելու կանոնները:
2. Հուղարկավորությունը գերեզմանատներում կատարվում է ամեն օր, ժամը 10.00-18.00-ն:
3. Գերեզմանատներն այցելուների համար բաց են ամեն օր, ժամը 9.00-20.00-ն:
4. Գերեզմանատան տնօրինությանը հուղարկավորություն կատարելու մասին տեղեկացվում է մեկ օր առաջ:
5. Հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը (մահացածի հարազատները, մտերիմները) իրավունք ունեն իրենց պատկանող գերեզմանի սահմաններում կատարելու գերեզմանների, գերեզմանատեղերի բարեկարգման և տապանաքարերի, մահարձանների տեղադրման աշխատանքներ՝ համաձայնեցնելով գերեզմանատան տնօրինության հետ: Նշված աշխատանքների կատարումը չպետք է վնաս պատճառի այլ գերեզմանների, գերեզմանատան կառույցների: Պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:
6. Սույն կանոնների 5-րդ կետում նշված շինարարական աշխատանքները կատարելու համար գերեզմանատան տարածք մեքենաների (մեխանիզմների) մուտքը չի արգելվում:
7. Այցելուները պարտավոր են չաղտոտել գերեզմանատան տարածքը և պահպանել մաքրություն: Այցելուները պարտավոր են ծիսակատարությունների և գերեզմանների խնամքի արդյունքում առաջացած աղբը տեղադրել գերեզմանատան տնօրինության կողմից հատուկ հատկացված տեղերում: Շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած թափոնները հավաքվում և տեղափոխվում են շինարարություն իրականացնող պատասխանատու անձի կողմից:
9. Գերեզմանների ոչնչացման, պղծման, դրանցում ամրակայված կառույցներին վնաս պատճառելու դեպքում մեղավորները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ **Շ.Գրիգորյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 10

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով արվեստի դպրոցի տնօրենի առաջարկը , համայնքի բնակիչներ Անուշ Ալմասի Մելոյանի , Սուսաննա Խաչիկի Ասատրյանի և Էդգար Հունանյանի դիմումները՝
ավագանին ո ր ո շ ե ց.

Շահումյան համայնքի արվեստի դպրոց հաճախող, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներ՝
Ինեսա Համազասպի Մելոյանի/վոկալ բաժին/-ուսման ամսեկան վարձը 3500 դրամ,
Վաչիկ Դավթի Դավթյանի /ժող.նվագարաններ/-ուսման ամսեկան վարձը 2800 դրամ,
Լուսինե Էդգարի Հունանյանի/դաշնամուրի և քանոնի դասարան/-ուսման ամսեկան վարձը 5300 դրամ նկատմամբ սահմանել ուսման վարձավճարի արտոնություն՝ 2016թ.մայիս ամսից մինչև դպրոցն ավարտելը 100%- ով ազատել ուսման վճարից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 11-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Արարատի մարզպետարանի ու Շահումյանի գյուղապետարանի միջև 30.04.2016թ.կնքված թիվ 36 ,,Դրամաշնորհի հատկացման պայմանագիրը,, 258.9հ.դրամի էլ.էներգիայի սակագնի բարձրացման հետ կապված՝ համայնքի ավագանին որոշեց.

Համայնքի 2016թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

բյուջեի ֆոնդային մասում՝

06.04.01.52 գործառնական դասակարգման 5112 հոդվածից 980.000դրամ գումարը տեղափոխել

01.01.01.51 գործառնական դասակարգման 5113 հոդվածին(համայնքապետարանի շենքի 1-ին հարկի

պատուհաններին ճաղավանդակներ անցկացնելու և տաղավար-զրուցարան կառուցելու համար),

բյուջեի եկամտային մասում՝

Ավելացնել համայնքի բյուջեի եկամուտները՝<<Պետ.բյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դոտացիաներ>>-ի

մասով 258.9 հ.դրամ ՝սահմանելով համայնքի 2016թ.բյուջեի ընդհանուր եկամուտները 94.184.3հ.դրամ:

՝բյուջեի ծախսային մասում՝

Համայնքի 2016թ.բյուջեի ծախսային մասը ավելացնել 258.9 հ.դրամ ՝սահմանելով բյուջեի ընդհանուր ծախսային

պլանը՝94.184.3հ.դրամ,նույն թվում ավելացնել 258.9հ.դրամ համայնքի բյուջեի 01.01.01.51 գործառնական

դասակարգման 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին՝ ծախսային պլանը սահմանելով 2.758.9հ.դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 12

<<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ >>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝ *ավագանին ո ր ո շ ե ց.*

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն , Արարատի մարզ,Շահումյան համայնք,գույքի մակերեսն է՝15999.35:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 13

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի արտոնությունների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, *ավագանին որոշեց.*

Նորատունկ այգետարածություններ հիմնած գյուղացիական տնտեսություններին տալ հողի հարկի արտոնություն՝համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՍ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
3. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Արարատի մարզ
Շահումյան համայնքի
ավագանու 20.05.2016թ
թին 13 որոշման

Շահումյան համայնքում բազմամյա տնկարքներ հիմնած գյուղացիական տնտեսություններին հողի հարկի արտոնություն տալու մասին

Արարատի մարզի Շահումյան համայնք

NN	Ազգանուն, անուն	հողի չափը	հողատեսքը	հողի հարկի արտոնություն տալու ժամկետը	հողամասի ծածկագիրը
1	Օհանյան Ենգիբար	0,23 0,07	դևդձ դևդձ	2016-2020թթ.	0158-001 0158-006
2	Ոսկանյան Վարդան	0,2	խաղող	2016-2019թթ.	0142-0006
3	Հակոբյան Հովհաննես	0,32	խաղող	2016-2019թթ.	0191-0008
4	Գևորգյան Համլետ	0,58	բալ	2016-2020թթ.	0158-0014
5	Սարգսյան Մեսրոպ	0,31	խաղող	2016-2019թթ.	0199-0004
6	Խաչատրյան Սուրեն	0,45	սալոր	2016-2020թթ.	0171-0011
7	Սիմոնյան Վարդուշ	0,5	սալոր	2016-2020թթ.	0171-0010
8	Սայադյան Արտաշ	0,23	խաղող	2016-2019թթ.	0146-016
9	Սայադյան Արծրուն	0,25	խաղող	2016-2019թթ.	0147-0014
10	Սայադյան Սիրուշ	0,22	խաղող	2016-2019թթ.	0147-016
11	Կարապետյան Ստեփանոս	0,336	ծիրան	2016-2020թթ.	0147-0037
12	Միրզոյան Ղազար	0,27	խաղող	2016-2019թթ.	0177-005
13	Հարությունյան Արթուր	0,21 0,20	խաղող	2016-2019թթ.	0193-009 0192-009

Աշխ. քարտուղար՝ Շ.Գրիգորյան